ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորության Միջազգային զարգացման նախարարության ֆինանսավորմամբ մարզում իրականացվել է «Կարտոֆիլի սերմաթարմացում» ծրագիր, որի արդյունքում մարզպետարանի արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 17.2 մլն դրամ:

Վերը նշված ծրագիրը ամբողջությամբ կատարել է իր առջև դրված խնդիրը և ներկայումս մարզում կարտոֆիլի տնկանյութի սերմաթարմացման պահանջ չկա:

Մարզպետարանի վարչական շենքը 2006-2008 թվականների ընթացքում հիմնանորոգվել է, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով նիստերի դահլիճի հիմնանորոգումը չի ընդգրկվել այդ ծրագրում: Վնասված է նիստերի դահլիճի տանիքածածկը, չի գործում ջեռուցման համակարգ, դռները և պատուհանները փայտյա են, որի պատճառով անհնար է դառնում մարզային միջոցառումների, մարզխորհրդի նիստերի և խորհրդակցությունների անցկացումը:

Նպատակահարմար է մարզպետարանի արտաբյուջետային հաշվին մուտքագրված 17.2 մլն դրամով կատարել դահլիճի հիմնանորոգման աշխատանքները:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ՝ Ս. ՍՊՈՂԱՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայտնում ենք այն մասին, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը Գավառի ՏԳԲ-ում ունի արտաբյուջետային միջոցների գանձապետական հաշիվ (900173078016) և նրա մնացորդը առ 03.02.2010 թվականի դրությամբ կազմում է 17212300դրամ:

Գավառի ՏԳԲ-ի պետ Ս.Բոշյան